

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միակամ խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԵՐՎԱՅ 1894 ԹՎԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԿԵՍՏԱՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԿԱՎԱԾ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռ., տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՊԱՎԱԳՐԱՆՈՒՄ:
Օտարաբաղադրացիք պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлис. Редакция «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի քանի խօսք. Հաւարարի արթնանալը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկու վերջնորոշում. Սոսկանի օգտին. Բանաւոր կանաչը Արարատեան դաշտում. Մի նկատողութիւն. Ներքին լուրեր.— ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հանրապետութեան նախագահի գործիքը. Հէնրիխ Լէյպզը. Նամակ Պարսկաստանից. Արարատի լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— Հեռագրի մասին. ԲՈՐՍՍ.— ՅԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՆՆԵՐ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Ներկայումս հայ հասարակութիւնը իր զարգացման նշանաւոր շրջաններէն մէկումն է գտնվում:

Կար ժամանակ, և այն ոչ շատ հեռու անցեալում, երբ կեանքի բազմազան երեւոյթները ընթացք էին ստանում նահապետական աւանդութիւններով: Գրեթէ զոր Արծրունու նման առաջացած և տաղանդաւոր անձինք անտուր և անտուր կը լուրէն էին ժողովրդի այդ անշարժութեան դէմ: Որպէս զի գիտակցութիւն արթնացնելէն հասարակութեան մէջ և իբրեւ վարձատրութիւն՝ երկար ժամանակ ենթակայ էին լինում ստոր գրադարութիւններ և կեղտոտ բամբակաբերներ:

Անշարժ և լռացած կեանքի պաշտպանները, յետագային, չէին կարողանում հասկանալ թէ նոր հասարակական ոյժ է կազմվել, առաջագիծ գաղափարները զարգացել են, և արհամարհանքով էին վերաբերվում դէպի նորին հակառակորդները:

Բայց թարմ հոսանքը կամայկամայ մեծանում, ուժեղանում էր և նրա առաջին յաղթական արապայտութիւններէն մէկը նոյն Արծրունու կաթողիկոսական պատգամաւոր ընտրվել էր:

Այնուհետև մենք տեսնում ենք, թէ ինչպէս պէտք առանց կանգ առնելու առաջ է գնում սկսված առաջագիծ շարժումը, թէ ինչպէս թուլանում է պահպանողականների ոյժը: Այն անասելի ստերը, այն դժուարին խորամանկութիւնները, որ նրանք գործ էին դնում, ապացուցանում էին միայն նրանց խուլութիւնը, անկման ստատիկը դիւրահաւ-

ժամանակ առաջագիծականները ունէին միայն մեծամասնութիւն, այժմ նրանք ունեն մի ստուար մեծամասնութիւն: Եւ այստեղ ևս աշխատեցին վերջնորոշվելու նշանակել տալ. իսկ ի՞նչ շահեցին: Գարձեալ կորուստներ, մէկը միւսից յուսահատեցնող կորուստներ:

Սակայն այժմ վերջացած է: Գիտադիմական ոյժը ընկած, խորտակված է: Նա այլ ևս չի համարձակվի դուրս բարձրացնել: Առողջ հասարակական միտքը, առաջագիծական շարժումը դառնում են մեր կեանքի ընթացքի անհրաժեշտ պայմանը, առաջագիծական կուսակցութիւնը դառնում է նոր կեանքի մշակողը, նրա ընթացքի որոշողը, նրա զորութեան տէրը:

Հեռու այստեղից ևս խաւարի իշխանութիւնը, կեղծիքը և այն բոլորը, ինչ անպիտան է և ստոր թող ճշմարտութեան զինուորները, առաջագիծական մշակները առաջ ընթանան՝ փրկարար հոսանքը ուժեղացնելու, ժողովրդական կեանքը արգասաւորելու համար:

ՀԱՆՈՒՐԱՐԻ ԱՐԹՆԱՆԱԼԸ

Թիֆլիսի Հաւարար կոչված մասը պարունակում է իր մէջ հայ ժողովրդի մի մեծ բազմութիւն, որը թէև ապրում է Թիֆլիսում, բայց շատ անգամ անտեղեակ է մնացել այն զորքերից, որ կատարվել են Թիֆլիսում: Նա կարծես կազմել է Թիֆլիսից կտրված մի մաս, կղզիացած իր կեանքով իր շահերով:

Մտաւոր հոսանք, կուսակցական գործունէութիւն, իտեղիքներ շրջաններ յարութիւն են առել, կազմվել և պահպանվել Թիֆլիսի կենտրոնական մասում, Սյոթակում և Սյոթակի կից, այդտեղ զարգացել և ազդել են ուրիշ քաղաքների և գիւղերի վրա: Այդտեղ մտածութեան և քննութեան առարկայ են դարձել ոչ միայն Թիֆլիսի, այլ և ամբողջ Անդրկովկասի վերաբերեալ մեծ և փոքր խնդիրներ, իսկ Հաւարարը իր ստուար ժողովրդով մնացել է առանց ուշադրութեան, առանց հոգատարութեան: Շատ անձեր, որոնք տարիներ շարունակ ապրել են Թիֆլիսում, չեն տեսել Հաւարարը, կարծում չեն համարել նրա հետ ծանօթանալու:

Թէև առանձին անձնաւորութիւններ Հաւարարում հետևում էին ընդհանուր կեանքին և մասնակցում նոյն իսկ իրանց գործունէութեանը, բայց ժողովուրդը մնում էր մեկուսացած, քնած, օրվայ ապրուստի մասին մտքը հոգեւորով միայն զբաղված:

Բայց ահա մի քանի տարի է, որ այդ ժողովուրդը ցոյց է տալիս արթնանալու հաստատ նշաններ: Նա սկսել է ուշադրութեամբ հետևել հրապարակ վրա դրված օրվայ խնդիրներին, նա քննում է գործողներին, հարցնում է հասարակական գործերի ընթացքի մասին, սկսում է հաշիւ պահանջել այն անձերից, որոնց յանձնված են երեցիկների հոգաբարձուի, եկեղեցական պատգամաւորների պաշտօններ, վերջապէս նա ցանկութիւն է ցոյց տալիս Թիֆլիսի ընդհանուր կեանքին մասնակցող իրենց և անելի խեղդի կերպով վարելու իր հասարակական գործերը:

Բայց ժողովրդին հարկաւոր են օգնողներ, նպաստողներ, նրա արթնացող գիտակցութիւնը շահագործողներ, նրա բարի ցանկութիւնները իրադրողներ: Ահա մի յարմար և արդիւնաւոր ասպարէզ Թիֆլիսի երկրաւորների մի մասի գործունէութեան համար բարեբեւեւ եղած հիմնարկութիւնները, իսկ չեղածները հիմնարկներ:

Եւ ծխական ուսումնարաններ, և գրադարան, և ընթերցարաններ, և կրթութեան զարգացնող, և ժողովրդական թատրոն, և մի շարք ինքնուրուի վրա հիմնված բարե-

գործական հիմնարկութիւններ, գիտակցական կենտրոն, արթնուն հսկողութեան տակ կարող են արդիւնաւորել այն կեանքը, որ վաղուց սպասում է բարեկամ հոգատարների:

Հաւարարի ժողովուրդը, ինչպէս ցոյց տալիս այս վերջին տարիների դէպքերը թէ եկեղեցական ընտրութիւնների ժամանակ, թէ խօլերայի դէմ մաքառելու ժամանակ, շատ լաւ ըմբռնում է իրենից դուրսիւնը և գնահատում այն գործողութիւնները, որոնք ուղղված են դէպի ժողովրդական բարօրութիւնը:

Պէտք է և ժամանակ է Հաւարարի ժողովրդի կարիքների մասին լուրջ մտածել և նրանք բաւարարութիւն տալ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՎԵՐԵՆՏՐՈՒԹԻՒՆ

Յուլիսի 3-ին Թիֆլիսի երկու եկեղեցիներում՝ Մոռնու և Զոկինանց եկեղեցիներում տեղի ունեցաւ վերջնորոշում:

Զոկինանց եկեղեցու ընտրութեան դէմ, որ տեղի ունեցաւ յունիսի 19-ին, իրանք ծխականները բողոք էին տուել: Նոյն իսկ ընտրված պատգամաւորներից մէկը, Գրիգոր Խլմիրեան բողոքել էր այդ ընտրութեան դէմ:

Հիմնվելով այդ բողոքի վրա, առաջնորդը բեկանել էր ընտրութիւնը և, ուրախութեամբ պէտք է նկատենք, մինչև անգամ ժողովի ժամանակ, նախագահող քահանայ յայտնեց այն պատճառները, որոնց հիման վրա ընտրութիւնը բեկանված է: Իսկ Մոռնու եկեղեցու ընտրութեան բեկանման պատճառը մնաց անյայտ:

Հարկաւոր ենք համարում աւելացնել, որ այդ եկեղեցիներում էլ ընտրվեցին հետևեալ թեկնածուները.— Մոռնու եկեղեցում՝ վերջնորոշվեցին բեկանված Թ. Գապարեան, բ. Թ. Լորիս-Մելիքեան, Եսկար Թաւրոսեան Զոկինանց եկեղեցում՝ ընտրվեցին՝ ի. Ն. Արդուխան, Գ. Խլմիրեան և Ն. Աթաբեկեան:

ՍՈՎՍԵՆՆԵՐ ՕԳՏԻՆ

Ստացանք թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովետների օգտին.

1) Ս և Բ ար գիւղից, տանուէր Ն. Աղասարեանի միջոցով. 20 ռուբլի, որ հանդանակել է այդ գիւղի հասարակութեան մէջ, վեհապետին ուղարկելու համար:

2) Բագուից, Յարութիւն վարդանանից 6 ռուբլի, որից 3 ռուբլի նուիրել է ինքը, իսկ 3 ռուբլին՝ Ալեքսանդր Սերգեյանց:

3) Բաւախ անիից, Ալեքսանդր Արեւանի միջոցով. 12 ռուբլի, հանդանակված «Կովկասեան նաւթային ընկերութեան» նախահաճութեամբ բանալ մշակներէն:

Ուրմի նախկին 503 ռուբլի 17 կոպեկի հետ այժմ ունենք ընդամենը 541 ռուբլի 17 կոպեկ: Այդ գումարից 10 ռուբլի տուելինք Մուշի վաւառի Մաճեթու գիւղի քահանայ տէր-Մատթէոս Տէր-Գրիգորեանին, որը եկել է այս կողմերը օգնութիւն հաւաքելու: Այդ քահանայ նախ եկել է Լիւմբաձին, և այստեղից եկել է Թիֆլիս՝ նպատակը իրագործելու նպատակով:

Այսօր, յուլիսի 5-ին, ուղարկեցինք. Կարս, Բարեգործական ընկերութեան հիւլին, գաղթականների համար 103 ռուբլի: Միւս մօտ մնաց 431 ռուբլի 17 կոպեկ: Ուրմի մինչև այժմ ստացել ենք 6872 ռուբլի 24 և Ուղարկել ենք 6441 ռուբլի:

ԲԱՆՈՐ ԿԱՆԱՅԻ ԱՐԱՐԱՏԱՆ ԴԱՏՈՒՄ

Գուցէ շատերը զարմանան այս վերնագիրը:

Կարգավոր և հարց տան, թէ մի՞թէ մեզանում էլ բանաւոր կանանց դասակարգ գոյութիւն ունի: Մենք կը պատասխանենք, այո, և մի քանի խօսք կը նուիրենք այդ խնդրին:

Արարատեան դաշտը, որպէս մի արգասաւոր երկիր, արդիւնաւորում է ամեն տեսակ՝ բոյս՝ ցորեն, գարի, բրինձ, բամբակ, ծխախոտ, խաղող, թիւնի, բազմաթիւ ծառապտուղներ, ֆետրակ, սեխ, ձմերուկ, վարունգ, կարտոֆիլ, բանջարեղէն և այլն, և այս բոլորը կարելի է մշակել մի և նոյն հողի վրա, և թէ միայն չէ պակասում ֆութը, և թէ ընդունենք, որ ամեն մի բոյս մշակվում է որոշ ժամանակամիջոցում, այն ժամանակ կը տեսնենք, որ Արարատեան դաշտի բնակիչը համարաւորաբար ինչ ամիսը զբաղված է դաշտային մշակութեամբ: Ահա թէ որտեղից է առաջացել կնոջ մասնակցութեան կարիքը դաշտային մշակութեան մէջ:

Երեւակայեցէք, որ մի և նոյն շաքարում հասել է այդին ջրելու հերթը, ժամանակ է բամբակի ցանքը մաքրել միասակար բոյսերից, պէտք է հնձել գարու կամ ցորենի արտը և վերջապէս կենդանիների համար խոտաբուխը պէտք է խոտ հնձել, բերել.— ահա այսպիսի ծանր և բարդ հանգամանքներից առաջացել է աշխատանքի բաժանումը մարդու և կնոջ մէջ, համապատասխան իրանց ուժերին՝ այն է այդի ջրելը, որ տեղի է ունենում գիշեր ժամանակ, հոնձը, որ պահանջում է անհամեմատ ծանր աշխատանք, կատարում է մարդը, իսկ բամբակի ցանքի մաքրելը միասակար բոյսերից և կենդանիների համար խոտ հնձել և բերելը, որ աւելի քիչ աշխատանք է պահանջում՝ կատարում է կնոջ: Շատ պարզ է, որ կնոջ դերը այսպիսով որոշված լինելով դաշտային մշակութեան մէջ, կարիք ունեցած դէպքում կնոյ, օգտվելով հանգամանքից, կարող էր մի և նոյն մշակութեամբ աշխատել և ուրիշների համար, որի փոխարէն կը ստանար վարկ—գրամ: Ահա թէ որտեղից է առաջացել բանաւոր կանանց դասակարգը...

Այս ընդհանուր նկատողութիւնից յետոյ, մենք մեր խօսքը կը մասնաւորենք Արարատեան դաշտի մի մասի, այն է Գեղար-Բասարի և յատկապէս նրա կենտրոնատեղի Ղամարուի և շրջակայ գիւղերի վերաբերմամբ:

Ինչպէս ամեն տեղ, այնպէս և այստեղ, Ղամարվում և շրջակայ գիւղերում կնոյ անբաժան աշխատող է տղամարդու հետ դաշտային մշակութեան մէջ, սակայն որոշաւ աշխատանքներում, զորանք են, նախ՝ տանը մնացած կենդանիների հոգը և նրանց համար խոտաբուխի խոտ բերելը, երկրորդ՝ բաղանդ—բամբակի ցանքերը միասակար բոյսերից մաքրելը կամ, ինչպէս անդալցիք ասում են՝ բժարը. երրորդ՝ կոյսելը, չորրորդ՝ այգեկոյթը և, վերջապէս, բամբակ ժողովել և քաղելը: Այս բոլորը յատկապէս կանայք են կատարում, և այս այնքան սովորական է դարձել, որ մինչև անգամ ոչ միայն տղամարդկանց անգործ եղած ժամանակն էլ կանայք են կատարում, այլ և ամենատպաւոր ընտանիքի կանայք չեն խորշում այդ տեսակ աշխատանքներից:

Այդ հանգամանքի շնորհիւ չբարձր կանանց համար բացվել է աշխատանքի մի նոր դուռ: Մի կողմից հողի պակասութիւնը, առաջացած զինաւորացեալ անջրդի մնալուց և աղքատականութեան բազմապատկում, միւս կողմից տղամարդկանց ծուլութիւնը և Բաքսին երկրպագելը՝ շատ նպաստել են աղքատութեան, և չը նայած երկրի պտղաբերութեան՝ չբարձր ընտանիքների թիւը անհամեմատ մեծ է: Այսպիսի ծանր հանգամանքներում անգամ, երբ տղամարդը ծուլութեամբ չէ ուղղում մշակութեան անկ, արհամարհելով նոյն իսկ 50—60 կոպեկ վարձատրութիւնը և ուտելիքը, կնոջն է մնում դիմել մշակութեան և պահել երեխաներին: Բայց որքան ցաւալի է, երբ կնոջ աշխատանքը շատ քիչ է վարձատրվում:

մինչդեռ տղամարդը 50—60 կոպէկ վարձ ստանալով հացն էլ ուտում է, խնդճ կինը, ընդհակառակը, իր ուսելու հացն էլ իր անհից է տանում և ստացած օրավարձն էլ շատ չնչին է՝ 15—20 կոպէկի Բայց գիտե՛ք, թէ կանայք որչափ հաւատարիմ են ծառայում, առանց խաբելու և ծուլանալու։ Առաւօտեան, դեռ լոյսը չը բացված, խումբ խումբ կանայք, հարսներ, նոյն իսկ փոքրիկ աղջիկներ, մի մի երկարակրթ ուրազ ունենորին դրած՝ դիմում են հանդը և վերադառնում են երեկոյեան բաւականին ուշ, մի մի ծանր շալակ խոտ ուսերին։ Գաւառ դուրս գալով, ամեն տեղ երևում են կանանց և աղջիկների խմբեր, որոնք շարք շարք կանգնած մի կողմից մաքրում են մետաղաբայերը, և միւս կողմից էլ նրանք քաղցր, մեղաւոր մաղձաւ ձախով երգում են գեղջկական լէլէլները, թէ ինչպէս կինը, ծանր աշխատանքի, ժամանակ, կիզող արեգակի տակ, տխուր բույններում արտայայտում է իր վիշտը, ծանր հոգսերը...

Վերջին տարիներում Գարաշիշագից բանւոր կանանց մի հոսանք է սկսվել դէպի այս կողմերը, աշխատաշնորհների ժամանակ, որը զնալով ընդհանրանում է։ Սա էլ ունի իր պատճառները... անբերրիութիւնը և տնտեսական քայքայումը...

Յ. Տ. Մ.

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

«Մշակի» 72-րդ համարում պ. Ապրան, իր մի գեղեցիկ յօդուածով մէջ գաղթականներին նուիրած, մի սխալ կարծիք է յայտնում Ալեքսանդրոպոլում բացված ճաշարանի մասին։ Նա այնպէս է համոզված, թէ ճաշարանները փչացնում, չիս կանգնեցնում են մուսուլմանութեանը, անգործութիւն են ստղծում օգտագործներին, և այդ տեսակետից նայելով՝ նա Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղերի կողմից ճաշարան բանալը համարում է մի սխալ և այդ սխալը նա վերաբերում է և Ալեքսանդրոպոլի ճիւղին։

Մենք ցատկով պէտք է նկատենք, որ յօդուածագիրը յայտնածը՝ եթէ ուղիղ է միւս տեղերի մասին՝ Ալեքսանդրոպոլի ճաշարանի վերաբերմամբ մի թիւր, անիմն կարծիք է, և եթէ նախքան այդ կարծիքը յայտնելը նա հետաքրքրվէր, քիչ-շատ ծանօթանար այդ ճաշարանի բացման պատմութեան հետ, այն ժամանակ նա կմտաւոր, որ Ալեքսանդրոպոլում ճաշարան բացվեց ոչ թէ դաղթականներին, այլ տեղացի քաղցածներին համար։ Եւ հենց այդ հանգամանքն է յօդուածագիրին սխալեցնողը։

Ճաշարանը իր մօտ քառամսեայ գոյութեան ընթացքում, յունկարի վերջերից մինչև ապրիլի վերջերը, կերակրել է բուն տեղացի, Ալեքսանդրոպոլի անճար, անօգնական աղքատներին, որոնք մարում էին, և ամեն օր ծեծելով սրա նրա դուռը՝ մէկից հայայնալ էին լսում, միւսից անկէք, երբորդից մի կտոր հաց ստանում։ Նայեցէ՛ք ճաշարանի մատակարարը, և դուք կը տեսնէք, որ անապին թուով ճաշ ստացողներին մէջ գաղթականները մի անհայտ մասն են կազմում, որոնք այն էլ վերջերս յայտնվելին, երբ դարձնել սկսել էր բացվել Ալեքսանդրոպոլում գաղթականներ չը կային, ներանցից ճաշարանում երևացողներին թիւը օրական 10—15 հոգուց չէր անցնում, դրանք էլ ստանում էին միայն այն ժամանակ, երբ տեղացի աղքատներին տոմսերով բաժանուց յետոյ՝ կերակուր էր աւելանում։

Յօդուածագիրը ասածը որքան ուղիղ է թուրքահայ գաղթականների վերաբերութեամբ, նոյնքան սխալ է տեղացի աղքատների վերաբերմամբ։ Ի՛նչ կանէ՛ք, ձեզ երբ հարցնում, եթէ տեսնէ՛ք մի ընտանիք, որի նայրը գործ չը գտնելով իր երեխաներին պահելու՝ նրանց սովամահ լինելու տեսարանից ազատված լինելու համար՝ զլուլին առել կորել է։ Աստուած գիտէ ուր, հարցնում ենք, հաց չէ՛ք տայ և կը թողնէ՛ք, որ մոռնան ի՛նչ կանէ՛ք, երբ մանկէ՛ք մի տուն և տեսնէ՛ք, որ մի սառը թոշրի շուրջ յունկարի ցրտերին հաւաքվել են 4—5 մանրիկ զննած, մաշված որբեր, որոնք ոչ հայր ունեն, ոչ մայր, ուր բն, դուռն երեսներին վակ, հարցնում ենք, հաց չէ՛ք տայ և կը թողնէ՛ք, որ մոռնան ի՛նչ կանէ՛ք, երբ մանկէ՛ք մի այլ տուն, և տեսնէ՛ք մի ծեր արհեստաւոր, աչքերը կուրացած մի քարտաշ, որ և է աշխատանքի անընդունակ, ունի մի

պառաւ կին և մի ջահիլ հարս, որդին մոռել է խօշորայից, դեռ լաւ է, որ երեխաներ չէ թողել։ Այդ մարդիկ ոչ տուն ունեն, ոչ հող, ոչ ակամատ, և եթէ նրանց դրսից ձրի հաց տուող չը լինի՝ բառացի մահոված են մահվան, հարցնում ենք, հաց չէ՛ք տայ և կը թողնէ՛ք, որ մոռնան ի՛նչ կանէ՛ք, այդ ընտանիքներն էլ խօս գնդկականներ չէին, որ քարոզէին վերադառնալ իրենց, իսկ փոխարինաբար ինչպէս տալինը նրանք ոչ մի տեղից, բացի մուրալուց, ստանալու յոյս չունեն։

«Ալեքսանդրոպոլի Բարեգործական ընկերութեան ճիւղը» ասում է յօդուածագիրը, չուտով իր սխալը զգաց՝ և դրա համար փակեց ճաշարանը։ Սխալ է։ Ճաշարանը փակվեց, որովհետև նրա անուշով հաւաքված դրամները սպառվեցին։ Սխալվեց Բարեգործական ընկերութեան ճիւղը, որ շատերին սովամահ լինելուց ազատեց, շատերը չը թողին իրանց ընտանիքը և չը փախան, շատերն էլ անձնապաշտութիւնից ձեռք վերցրին։ Այո, քաղցածութիւնից անձնապաշտութեան փորձ էլ եղաւ. շատերը, ի հարկէ, այդ չը գիտէին։ Ճաշարանները չեն, որ աղքատներին վկայական են տալիս, արհեստով աղքատներն ստեղծում և մուրացկանների թիւն աւելցնում, դրա համար կան աւելի խորը պատճառներ, աւելի մեծ չարիքներ, հասարակական աւելի դուռն պայմաններ, ահա սրանց դէմ պէտք է կռւել և պայքարել։ Դրանք օգնութեան դէմ, որ մի ժամանակաւոր չընչին սպիտակեց է ձնշված, քաղցած ժողովրդին։ Ուր էր թէ կանայք այնպիսի կազմակերպութիւն ունենար, որ ամեն մի անհատ իր տեղական աշխատանքով, իր ոյժերով ապրէր։ Ուր էր թէ մարդկային անձնաւորութիւններին մուրալ տալու պայմանները վերացած լինէին... Այս տարի Եւրոպայի բազմաթիւ գիւղերի աղքատներին ահա հազին մեծամասնութիւնը մուրում էր, երբ բանջար չէր դուռն ուտելու, նրանց ինչը ստղծեց մուրացկանութիւնը արհեստ դարձնել, դարձնալ ճաշարանները... Միջոց տուէ՛ք մարդկանց վերականգնելու իրանց քաղցածված անտեսութիւնը, այն ժամանակ նրանք ոչ ձեռ փոխաւորութիւնը կուտեն, ոչ ձրին։

Վ. Գաւազարեան

ՆՈՒՐԻՆ ԼՈՒՐԻՍ

Երեկ, ամսիս 4-ին, Անդրկովկասեան երկաթուղու կառավարչի օգնական Կորյը սպանվեց օրը ցերեկով։ Կորյին, որն զնալու ժամանակ, յետեից դաշոյնի երկու արագ հարուածով գետին դրոյց մի նախկին կոնդուկտոր։ Խաչոյի կրքով հարուածը հասցնելով փորին, սպանողը հեռացաւ և դիմաց դէպի գրասենեակը, ուր յարձակվեց ծառայող Զօրանիցիւս վրա։ Սա կարողացաւ դիմադրել բռնեց երեսնամորթին, բայց չարագործը կտրեց նրա ձեռքի թափը դաշոյնի հարուածով։

«Times» լրագրի խօսքերով, արեւմտահայ ընդհանրում է տեղի ունեցել դրոյնների և հայերի մէջ Միւրիայում, որը չափազանց ծանր կերպարանք է առել։ Սպանվածների և վիրաւորվածների թիւը 400-ից անցնում է, որոնց թիւում սպանված են և 12 կանայք։ Այդ խառնակութիւնների պատճառով տեղական նահանգապետը պաշտօնանկ է եղած։

Բժշկապետ Յ. Գաւազարեանց, ուղարկելով մեր խմբագրութեան 50 բուրլի, նուիրել է «Մշակի» ներկայ 1894 թւի կէս տարւոյ 10 օրինակ Երեւանի և Եւլու թեմերի հայոց դպրոցներին։ Մեր լրագրի յաջորդ համարները մէկում կը յայտարարեն, թէ ո՞ր դպրոցներին կուղարկենք «Մշակի» համարները։

Մեզ հեռագրում են Եւլու, յուլիսի 2-ից, «Այլապէս կայսերական կարգադրութիւնների դէմ թեմական դպրոցի հողաբարձութեան և հասարակութեան կողմից տուած բողոքներին հիման վրա» վճռաբար հրամայում ամեն բան թեմական դպրոցում պահել այն դրութեան մէջ, ինչ թիւններն մէջ գտնվում էր մինչև հարցաքննութիւնները։ Իսկ երկի, յուլիսի 4-ից ստացանք Եւլուց հետեւեալ հեռագիրը։ «Թիֆլիսի մի լրագրի, այստեղի թեմական հոգեւոր դպրոցի վերաբերմամբ հողաբարձ լուրերի մի մասը սուտ են, միւսը մասը բողոքին յղակաւորված։

Յօդուած Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստա-

ցանք. 1) Միւրիայից, Եւլու Գրիգորեանի միջոցով, 12 ր. 25 կ., որ հանգանակված է Միւրիայի մի խումբ երիտասարդների մէջ։ 2) Միւրիայից, Նատալիա Եւրանցի և Գարեգին Տէր-Ստեփանեանցի միջոցով, մի խումբ օրիորդների մէջ հանգանակված 8 ր. 72 կ.։ Նուիրատուներն են. օրիորդներ՝ Ս. Օթարեան՝ 2 ր., Ե. Ղուկասեան, Կ. Դանիելեան—մի-մի բուրլի, Ե. Մատինեան՝ 50 կ., Մարիամ՝ 50 կ., Ն. Ե. Ա. Սարգսեան, Մ. Սարգսեան—մի-մի բուրլի, Սարկիսի 50 կ., Միւրիս 40 կ.։ Ուրեմն նախկին 3377 բուրլի 75 կ. հետ այժմ ունենք 3398 բուրլի 72 կ.։

Այս օրերս, մայրաքաղաքի լրագրիների խօսքերով, Մոսկվայում Պետրոսկայայ աղաղէմիան վերջնականապէս վերափոխվեց Գիւղատնտեսական ինստիտուտի, երկու բաժանմունքներով՝ գիւղատնտեսական և գիւղատնտեսական ինժեներական։ Զեւաները ինստիտուտում չեն ընդունվում։ Խնտիտուտում ընդունվում են նրանք, որոնք ունեն գիմնադրանքի, բնական դպրոցների լրացուցիչ դասարանի և այլ այնպիսի միջնակարգ դպրոցների վկայականներ, որոնց դասընթացը բաւարար կը համարվի ինստիտուտը մտնելու համար։

Լսում ենք, որ Թիֆլիսի թեմական առաջնորդը մտադրել է Ներսիսեան դպրոցի հողաբարձական ընտրութիւնը նշանակել առաջիկայ կիրակի օր, յուլիսի 10-ին։

Յայտնի միլիոնատէր Ի. Սիբիրսկով, անթրոպոլոգիական թանգարան հիմնելու համար նուիրել է 250.000 բուրլի և մի քարաշէն տուն Պետրոսկայայում։

Թիֆլիսում յայտնի տիկին Մ. Սերպին, որ մեր քաղաքում ունէր մասնաւոր իգական գիմնազիա, յուլիսի 25-ին վախճանվեց Բորժոմ ամառանոցում, որտեղ և տեղի ունեցաւ նրա թաղումը։ Տիկին Սերպինի դպրոցը նրա մահվանից յետոյ անցել է Ստրուվէի ձեռքը։

Մեզ հաղորդում են, որ Երևանի թեմական դպրոցի տեսչի պաշտօնին համար հողաբարձութիւնը ի նկատի ունի պ. պ. Ղազարոս Աղայեանին, Ստեփան Մալխասեանին և Լևոն Մանուկեանին։

Մի մի անգամ բարձր վարչութեան ներկայացուցիչները նահանգներում ստիպված են լինում շրջաբերականներ հրատարակել՝ կռուելու մի չարիքի դէմ, որ շատ է զարգացած մասնաւոր գաւառներում, այն է ամբաստանագիրների գրելու և մասնութիւններ տնելու դէմ։ Այդպիսի մի շրջաբերական հրատարակել է նորեւս Վօլինի առհանգապետը, որ տպված է «ВОЛЫНЬ» լրագրում։ «Ես» ասում է նահանգապետը—ցտեղով այն համոզման եմ գալիս, որ Վօլինի նահանգում չափազանց տարածված է անասուն և կնիք ամբաստանագիրների գրելու և մասնութիւնների անելու սովորութիւնը։ Վերոյիշեալ մասնութիւնները անում են ոչ միայն անգրագէտ կամ կիսագրագէտ գիւղացիներ, այլ այնպիսի մարդիկ, որոնք թէ դիւրե ունեն, թէ զարգացում և թէ կարողութիւն։ Այդ բանը նահանգապետը հասարակական մեծ չարիք է համարում և ապա աւելացնում է. «Երբեք գրուածք գալով դէպի մի այդպիսի երեւոյթ, որ հետեւանք է ամենաստոր դըրձնալիս—այն է՝ շահաբերութեան, դրամ կորուցելու, աղքատ անուանված շահաւորի, անձնական թշնամութեան, վրէժխնդրութեան և այլն, ևս իմ պարտքս եմ համարում ինձանից կախված բոլոր միջոցներով արմատախիլ անելու ինձ յանձնված նահանգի աղքատանկութեան մէջ մաս։

Նութիւններ անելու տխուր սովորութիւնը, և նոյն բանը պարտաւորեցնում եմ անել ինձ ենթարկված վարչութեան և ուսողականութեան բոլոր օրդաններին։ Այդ նպատակով հարկաւոր եմ համարում մասնաւորաց անել, որ ճիշդ կերպով գործադրվեն այն օրէնքները, որոնք պաշտպանում են թէ մասնաւոր և թէ պաշտօնական անձանց սուտ մասնութիւններ անողների վնասակար գործունեութիւնից։

Կովկասեան ցեղաբնական կոմիտեի առաջարկութեան համաձայն, տպագրում ենք Զանգեզուրի գաւառապետ Սուչիկովի-Բակուի հետեւեալ հեռագիրը. «Кавказъ»-ի № 128-ում արտասուված է «Մշակի» թղթակցութիւնը Զանգեզուրի

դաւառի մէջ կատարված առաջակային խմբի կողմից անհրաժեշտ մասին Այդ տեղեկութիւնը հնարուվել է և միայն թղթակցի ֆանտազիայի արդիւնք։

Արտաքին գործերի մինիստրութիւնը, «Трехъ Вѣст.» լրագրի խօսքերով, ուսաց դիպլոմատական ներկայացուցչի միջոցով թէհրանում, բանակցութիւններ սկսեց պարսկական կառավարութեան հետ, որպէս զի ամառապահան վերահսկողութիւն նշանակվի արեւելից եկող առևտրական քաղաքաների վրա՝ դրանց ճանապարհի գլխաւոր կենտրոններում, այն է՝ Բէնդէր-Աբասում, Մէշէ-դում և Սերէվարում։ Ներկայումս պարսից կառավարութիւնը, որպէս հաղորդում է ուսաց դիպլոմատ թէհրանում յունիսի 16-ից, կարգադրութիւններ է արել խիստ միջոցներ ձեռք առնելու, որպէս զի ժամատախաղ չը տարածվի Պարսկաստան՝ Չինաստանից և Հնդկաստանից։

«Տարազ» շաբաթաթիւթը իր վերջին համալուծ տպագրել է Սադի Կարսի վերին աստիճանի աղողված պատկերը։

Գերմանական հիպատոսարանը Թիֆլիսում, յունիսի 14-ից մինչև 23-ը, վաւերացրել է արտասահմանեան անցագրիւնը հետեւեալ անձանց համար, որոնց մեծ մասը մտադրութիւն ունէր «Վաղի-միր» շողեւանով ճանապարհ ընկնել. — Յովհաննէս Խաղաղով իր Մարիամ կնոջ հետ (կինը խեղդվեց, իսկ մարդը փոստգաւոր հիւանդ է), Յովհաննէս Ղուկասեան (Խաչոյովի գործակալաւոր, խեղդվեց), Նիկոս Թամաշէլ, Յովհաննէս Բարխուդաւով իր Մարիամ կնոջ և Արամ որդու հետ, Սիւսանթ Արամեանց իր Յովհաննէս որդու հետ (Երևանեան նահանգից), Աննա Կորգանովա (նրա հետ էր և գերմանահայտալ Մարիա-Լուիզա Բրատէր), Ալեքսանդր Մէլք-Բէգլարով իր Վարվարա կնոջ հետ (Երևանեան օդակային նահանգից), Աննա Կար Յովսէփ որդու հետ, Սիւսանթ Բեհթով իր Գէորգ որդու հետ, և Կար Դմիտրի։

Բագրի «Каспій» լրագիրը հաղորդում է, որ Մոզդուի տոհմական պառուսուր քաղաքացու աղջիկ Նատալիա Ուլուխանովա, որը ծնվել է 1848 թւին և այս լուսաւորչական դաւանութեան էր պատկանում, ուղղափառութիւն է ընդունել։

«Нов. Обозрѣніе» լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ Սվանթիայում հացի մեծ պակասութիւն է զգացվում։

Թիֆլիսից մինչև Ալեքսանդրոպոլ երկաթուղու գիծ անցկացնելու մասին տեղական առաւ լրագրիւնը հետեւեալ լրացուցիչ տեղեկութիւններ են հաղորդում. Ճանապարհը Ալեքսանդրոպոլից մտադրութիւն կայ անցկացնել դէպի Երևան Արիաշայի հովիտով մինչև Մաստարա գետի Սարգար-Արաղ կոչված ձորովին, ապա այդ ձորովիով ճանապարհը կիշին գառնիայի դէպի Սարգար Արաղ դիւղը և ապա կը շարունակվի Էջմիածնի դաշտավայրով դէպի Երևան։ Ամբողջ տարածութիւնը Ալեքսանդրոպոլից մինչև Երևան մօտ 150 վերստ է. հետեւաբար, Թիֆլիսից մինչև Երևան—350 վերստ։ Դէպի Կարս գնացող գիծը կը բաժանվի 9 վերստ Ալեքսանդրոպոլից հեռու, Բայանդուր դէպի մօտ, կանցնի կամուրջով Արիաշայ գետը, նախ կերթայ Եօրագետի դաշտավայրով մինչև Սպասովկա գիւղը, որի մօտ կը միանայ կամուրջով Կարս-Հայի աջ ափին հետ, և ապա կերթայ դէպի Կարս։ Երկաթուղիական այդ ճիւղի տարածութիւնը է մօտ 70 վերստ, Թիֆլիսից—270 վերստ։ Վերոյիշեալ Թիֆլիս-Երևան և Երևան-Թիֆլիս գծերի կառուցման վրա, մօտաւորապէս հաշուելով, ծախս կերթայ մօտ 25 միլիոն բուրլի։

Երեւանի մեջ գրում են. «Պողոս Պետրոս Կէհլըցում յունիսի 12-ին կատարված պատգամաւորական ընտրութիւնը բեկանվեց բողոքովին ապօրինի կերպով և նոր ընտրութիւն էր նշանակված այսօր, յունիսի 26-ին։ Ընտրվելին ձայները առաջին մեծամասնութեամբ՝ Ռ. Զաւարեանց, Վ. Պողոսեանց, Գ. Անտօնեանց, Յ. Մէլքեանց, Վասիլ Եղիազարեանց, Բիշիկ Սիմեոնեանց, Գ. Խանաղաղեանց, Գ. Ահարոնեանց, Ա. Ֆիլիկեանց, Մ. Բունիաթեանց, Գ. Գաւազարեանց և Զ. Նիղադարեանց։ (Այս բոլոր Նիղադարեանց կրկին անգամ սկսեցաւ)։ Այս թիւով լինել վերջին խրատը խաւարամիտներին։

ՂՈՒՐՍ
դպրոցի ու
րերս եկ
ջիւ Ղուր
սիրելու հ
նիստ ու
ված է յս
կան դպր
նա պէտք
նով
25-ին, չ
թիֆլիսի
րաւոր
թումը բ
րով։ Խոս
թողեց և
կանչվեց

Նախկ
գրում
ուսում
Յիւսի
է, սպա
րի թաւ
օրինակ
զերում
նակ է, ո
խաղաղ
ձիււոր,
կով, որը
ների պա
րանց ս
հաղաւթ
արաւ և
ները յա
նակ պա
ներում չ

ԱԼԷԲ
ցին տա
անձին չ
են... քա
խոսերի
և կիպ

ԱՐ
ՀԱՆՐԱՊ

«Պար
կոչված
նաւորա
նում եմ
ամբողջ
չիլի յան
իր անդ
հայրենի
տարի չ
մեր հի
հերոս
ինձ։
ժանրու
համար
ձեր ար
կերպով
բաղդաւ
զուլուր
լի մտք
է Ֆրան
համար
ժամկա
ցումն հ
տատու
բողջ ա
րութիւն
նը, երկ
մանալ
նակ է
ցոյց տա
քաղաք
մէջ ազ
թիւն ց
դրանց
նը և կ
է զարգ
րապետ

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Բազում րէպական դպրոցի ուսուցիչ լեզուի ուսուցիչ Պապարին նորինքն եկաւ Ղուբա և մտադրութիւն ունի շըրջել Ղուբա գաւառի խնայող գիւղը՝ ուսումնասիրելու համար այդ գիւղի բնակիչներին լեզուն, նրա ու կարգը, սովորութիւնները: Նա ուղարկված է յատուկ այդ նպատակով Բազում րէպական դպրոցի կողմից: Խնայող շրջիկացի յետոյ, նա պէտք է գրաւոր զեկուցում տայ դպրոցին»:

ՆՕՎՈՐՈՍԻՑԿԻՅ մեզ գրում են. «Յունիսի 25-ին, շաբաթ օր, ամառային այգու թաւարմում, թիֆլիսից եկած վրաց երգեցիկ խումբը, պրատիկ զեկավարութեամբ, մի կոնցերտ տուեց: Խումբը բնի դուրս եկաւ վրաց պատմական շարժումով: Խումբը բաւականին լաւ տպավորութիւն թողեց և րատիլը մի քանի անգամ բնի դուրս կանգնեց»:

Նախիջևանի գաւառի ՅՂՆԱ գիւղից մեզ գրում են. «Վաղարշայի 2 խումբ թափառում են շրջակայ գիւղերում և նոյն իսկ Յիւնայի սահմաններում. կողոպտում անպակաս է. սպանութեան փորձեր եղել են. տնեւորի թալանումը նոյնպէս սովորական է, ինչպէս օրինակ Քաղաքի և Մօրվանի հայաբնակ գիւղերում: Պ. դաւաճապետը այս մի քանի ժամանակ է, որ շրջում է մեր կողմերում. շրջակայ իւրաքանչիւր գաւառամասից պահանջել է 16 ձիաւոր, ամսական իւրաքանչիւրին 20 ռուբլի ուժեղով, որը գիւղացիք պէտք է վճարեն: Ձիաւորների պարտականութիւնն է՝ գիւղեր ցերեկ շրջել իրանց սահմաններում և առաջակիցներն բռնելու կամ հարածնելու համար: Գաւառապետը նոյն պահանջն առաւ և Յիւնայի գաւառամասից, բայց գիւղացիները յայտնեցին, որ անկարող են: Գրաւ փոխանակ պարտաւորում են հերթով գնալ սահմաններում շրջելու»:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Գիւղացիք տագնապի մէջ է. երկու շաբաթից առել է անձրև չէ՝ դալիս. ցանքները արդէն փչանում են... քաղաքում տիրում է սառսիւկ շոթ: Երեւանի մէջ սաստիկ տայրածված են կարմրուկ և «կապոյտ հաղ» հիւանդութիւնները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԹԻՒՆԸ

Պարոններ սենատորներ և պատգամաւորներ: Կոչված լինելով ազգային ժողովի կողմից ամենաբարձր պաշտօնի մեր երկրում, ես պատկանում եմ ոչ թէ որ և է կուսակցութեան, այլ ամբողջ Ֆրանսիային և հանրապետութեանը: Գարշիկի յանցանքը, որի դէմ ազգային խղճմամբը իր անդաճ դատաւճիւրը կարգաց աղկն, իսկ հայրենիքից անկախաճ քաղաքացուն, որը ես թէ տարի շարունակ ամենաբարձր պահպանողն էր մեր հիմնարկութիւններին թող իր պարտքի այդ հերոսի յիշատակը երկար ոգևորէ և զեկավարել ինձ: Ինձ վիճակված պատասխանատւութեան ծանուցիլները չափազանց մեծ է, որպէս զի ես համարձակվեմ շնորհակալութիւն յայտնել ձեզ ձեր արած ընտրութեան համար: Ես շատ ջանք կեցողով սիրում եմ իմ հայրենիքը, որպէս զի ինձ բաղդաւոր դգամ այն օրին, երբ դարձաւ նրա բաղդաւոր Տայ Աստուծո, որ կարողանած դռնից իմ մտքի և սրտի մէջ այն ոյժը, որ անհրաժեշտ է Ֆրանսիային արժանաւոր կերպով ծառայելու համար: Ազգային ժողովի կամքը, որով մի քանի ժամկայ մէջ կատարվեց իշխանութեան փոխանցումն, հանրապետական հիմնարկութիւնների հաստատուն և կայուն լինելու նոր ապացոյց էր ամբողջ աշխարհի աչքում: Պարզը, որին կատարութիւնը մատուցանում է իր շնորհակալութիւնը, երկի շնորհակալութեան և յարգանքի դարձմանայի ապացոյց տուեց: Մի երկիր, որ ընդունակ է այդպիսի խիստ փորձութիւնների մէջ ցոյց տալ այդքան բարոյական դիւցիսիլինա և քաղաքական արկութիւն, կարող է միացնել իր մէջ ազատութիւնը կառավարութեանը հնազանդութիւն ցոյց տալու հետ միասին, որովհետեւ առանց դրանց կործանվում են ազգերը:—ազատութիւնը և կառավարութիւնը, որը անյողող ձգտում է դարգացնել բարքերը, անհրաժեշտ են հանրապետական ղեկավարութիւնի համար:

Ես հաստատ դիտարկութիւն ունեմ եօթ տարուց յետոյ տալ Ֆրանսիայի վիճակը ուրիշի ձեռքը: Բայց քանի որ նա ինձ է յանձնված, ես, յարգելով ազգի կամքը և հասկանալով պատասխանատւութեան զգացմունքը, իմ պարտքս կը համարեմ ձեռքից չը թողնել, չարհամարհել, չը հրաժարվել այն իրաւունքներից, որ տալիս է ինձ հանրապետութիւնը: Վստահ լինելով իր վրա և կատարեալ հաւատով վերաբերվելով իր զօրքին և նաւատորմին, Ֆրանսիան, ստանալով բոլոր կառավարութիւններից և ժողովուրդներից համակրութեան միաբուռն և սրտաշարժ ապացոյցներ, Ֆրանսիան կարող է բարձր պահել իր գլուխը և յայտարարել, թէ սիրում է խաղաղութիւնը: Մնալով իր կոչման բարձրութեան վրա, նա առաջվան պէս կը մնայ մեծ օջախ մտաւոր լոյսի, ներողամտութեան և պրօգրէսի: Սենատը և պատգամաւորները ժողովը կը կարողանան կատարել երկրի ցանկութիւնը, նուիրելով իրանց ժամանակը այն բոլոր ձեռնարկութիւնների ուսումնասիրութեանը, որոնք կարող են ծառայել Ֆրանսիայի փառքի աճմանը, զարգացնել նրա երկրաբարձութիւնը, արդիւնաբերութիւնը և առևտուրը և առելի ևս զօրեղանքն ազգային վարկը:

Պարամունտը կը կարողանայ ապացուցանել, որ հանրապետութիւնը, հետև լինելով անձնական փառասիրական մրցումից, անդադար աշխատում է նւթագէտ բարեօրել երկիրը և բարձրացնել նրա բարոյականութիւնը: Իր բուն էութեամբ հանրապետութիւնը մի այնպիսի կառավարութիւն է, որ վրդովում է ամեն տեսակ անարդար կրած տանջանքների դէմ և իր պարտքն է համարում իրաւորել իր վրա դրված բոլոր յայտերը: Այս այդ գաղափարներին ծառայելու համար է, որ հրաւիրում է ձեզ կառավարութիւնը: Ֆրանսիայի սիրտն է թելադրել այդ գաղափարները իր ներկայացուցիչներին: Միացնելու ուրեմն մեր բոլոր ջանքերը, որպէս զի պատրաստներ նրանց յաղթանակը: Անցեալը մեզ համար դաս է, բայց Ֆրանսիան ուղղում է իր հայեացքները դէպի ապագան: Հասկանալ իր դարաշրջանը, հաւատալ պրօգրէսին և ցանկանալ նրան,— դա նշանակում է ազատվել հասարակական կարգի և սոցիալական խաղաղութիւնից:

Նախադասի գրութիւնը լսեցին խորին լուսթեամբ: Ընթերցանութեան վերջը բռուն և երկար ծափահարութիւններ լսվեցան:

ՀԵՆՐԻԽ ԼԵՑԱՍԻ

Լրագիրները հաղորդեցին, որ վախճանվել է յայտնի դիպլոմատ և արեւելագետ Հենրիխ Լէյպցը: Լէյպցը ծնվեց 1817 թվ. մարտի 5-ին Պարիզում, ծագումով ֆրանսիական, բայց Անգլիայում երկար ժամանակ ապրելու պատճառով՝ անգլիական դարձած ընտանիքում: Մի քանի տարի նա իր հօր հետ ապրեց Իտալիայում և 1833 թվ. վերադառնալով Անգլիա, սկսեց իրաւաբանութիւն ուսումնասիրել: 1839 թվ. նա ճանապարհորդեց արեւելքում և սկսեց ուսումնասիրել լեւոնտի աւերակները: 1845 թվ. նա ձեռք գորկեց փորձաքննութիւն և գտաւ ասորեստանական թագաւորական պալատների աւերակները դէպի հարաւ հին Նիւոէլից: Գրանցից ոչ պակաս նըշանակութիւն ունէին նրա փորձաքննելը, որ նա կատարեց բրիտանական թանգարանի հաշուով: Ստանում է (ին Նիւոէլի կնիւրում) և Բաբելոնի աւերակներում: Նրան կոչվեց գտնել, բացի բազմաթիւ բարեկիցներից, Սարդանապալ թագաւորի ամբողջ զրադարանը, որը բաղկացած է հազար կաւէ արկիւլներից, և այլ բազմաթիւ նիւթեր: Նրան ասորեստանական կենսքը, կուլտուրան և պատմութիւնը ուսումնասիրելու համար Այդ բոլոր գտնները բրիտանական թանգարանի սեփականութիւն դարձան:

Իր արած գիւտերի նկարագրութիւնը Լէյպցը հրատարակեց 1848 թ. երկու մեծ հատորներով և առաջում է Նիւոէլի և իր մնացորդները վերնագրով: 1852 թվ. լոյս տեսաւ նրա երկրորդ հեղինակութիւնը՝ Նիւոէլի և Բաբելոնի վերնագրով: Լէյպցը 1852 թ. մի առ ժամանակ ծառայեց արաւելի գործերի միւնիստրութեան մէջ, ապա ընտրվեց պարլամենտում, ուր աչքի ընկնող դեր խաղաց ժողովրդական կրթութեան րէֆորմի վերաբերեալ հարցում: 1862 թվ. նա ստացաւ իր նախկին պաշտօնը արաւելի գործերի միւնիստրութեան մէջ, իսկ 1866 թվ. նա հրաժարական

տուեց, 1868 թվ. ստանձնեց հասարակական աշխատանքների միւնիստրի պաշտօնը, իսկ 1869 թվ. ղեկավարեց Նշանակվեց Մադրիդում:

Լէյպցը 1877 թ. ղեկավարեց Նախագահական հայեացքներն էր անցկացնում, չը նայելով, որ ինքն պատկանում էր ազատամիտ կուսակցութեանը: 1878 թ. յունիսի 4-ի պայմանագիրը, որի զօրութեամբ Անգլիոյ կղզին անցաւ Անգլիայի ձեռքը, նրա գործն էր: Բիկոնսֆիլդի հրաժարականից յետոյ (1880 թվ.), Լէյպցը թողեց իր պաշտօնը և վերադարձաւ Անգլիա:

ՆԱՄՍԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, յունիսի 13-ին

Ամեն տեղ կուսակցութիւնները գործում են՝ հինգված զանազան ուղղութիւնների վրա, մինչդեռ այստեղ, Թէհրանում, առանց մի որոշ նպատակի, բոլորովին կրքից կուրացած և նոյն իսկ ստոր միջոցներին դիմելով:

Այս օրերս «Շաւիդ» շաբաթաթիւթը քիչ էր մնացել գոհ քմար այդ անզուպ կրքերին, որ տիրում են այստեղի կուսակցական խմբերի մէջ:

Շաբաթաթիւթի հակառակորդները, ամեն ստորութիւն յանձն առած, ճշում են թերթի խափանման համար զանազան մատուցութիւններ առնել կառավարութեան: Ամենից առաջ այդ սեւեռնոյի պարունակը «Շաւիդ» բառը բացատրել էին, որպէս թէ՛ նշանակում է յեղափոխական ճանապարհ, բայց խմբագրութեանը աշուղդ էր կառավարութեան առաջ բերողին ջրեկ այդ միտքը: Երկրորդ՝ «Բաֆֆի» ընկերութեան օգտին թիւրքաց դեսպանի հովանաւորութեան տակ դրած հանգիսի վերաբերմամբ «Շաւիդ»-ում լոյս տեսած մի քանի տողը՝ ահագին աղմուկ բարձրացրեց, որ և պատճառ դարձաւ մէկ համարի գուրմ չը գալուստ:

Մի քանի պարունակի գնում և թիւրքաց դեսպանին յայտնում են, թէ նա ինչպէս իր հովանաւորութեան տակ է առել այնպիսի մի ընկերութեան հանդէսը, ինչպիսին է «Բաֆֆի» ընկերութիւնը, որը կրում է մի այնպիսի մարդու անուն, որ յեղափոխական է եղել:

Թիւրքաց դեսպանը ուրանում է, թէ այդպիսի բան չէ եղել և աւարկում է, թէ «Շաւիդ»-ում լոյս տեսած լուրը բոլորովին անհիմն է. ապա «Շաւիդ»-ը դէմ դանդաղ է ներկայացնում պարսից կառավարութեան Սակայն այս անգամ էլ թիւրքաց կառավարութեան ներկայացուցիչը պարտութիւն է կրում իր ստալիստութեան համար:

«Շաւիդ»-ի հակառակորդները այն աստիճան են կրքից կուրացել, որ գանգատվելով հեռագրատան տեսչին, արձակել տուեցին մի հայ ծառայողին, զրպարեցելով նրան, որպէս թէ հեռագրատան գաղտնիքները դուրսը յայտնում է:

Շատ ցատկ է, ճշմարիտ, որ մի խումբ պարսկահայեր այն աստիճան դեռ իսկ են, որ ձեռք առնում են իրանց շահերին ծառայող օրգանի հրատարակութիւնը խախտել տալ ամենաանհրաժեշտ միջոցներով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Memorial Diplom.» լրագիրը հաղորդում է, որ Բ. Դուռը պաշտօնապէս հեղքում է Կ. Պոլսում 1896 թվ. կայանալի թիւրքաց ցուցահանդիսի մէջ կամ երկու տարով յետաձգելու մասին տարածված լուրը: Այդ ցուցահանդէսը պէտք է շոշափելի հասկացողութիւն տայ թիւրքաց կայսրութեան հարստութեան մասին՝ համեմատած հարեանների հետ:

Բելգիական արտաքին գործերի միւնիստրը բանակցութիւններ սկսեց դեսպանների հետ աւարիտիզմը ճնշելու համար ձեռք առնելի միջոցների մասին: Անգլիական դեսպանը յայտնեց, որ Անգլիան պատրաստ է խլել ապաստանելու իրաւունքը անարխիստներին:

Ղաղաղստն Շաւանդիւն է գնում իր առողջութիւնը կաղաղութելու համար: Ի նկատի ունենալով այդ, Գաղաղստն ընտրութեան շրջանի գործադիր մասնաժողովը խորհրդակցում է այդ շրջանի մի այլ ներկայացուցիչ նշանակելու մասին պարլամենտում: Գաղաղստն կարական կերպով յայտնեց, որ ինքն այլ ես չի վերադառնալ պարլամենտական գործունէութեանը: Նրա յաջորդ

աղաղստները համարում են Թոմաս Դիքսոն Կորնիսէլին:

«Tempt» լրագրի Բելգիայի թղթակիցը հաղորդում է, որ Սերրիայի Ալեքսանդր թագաւորը ոչինչ զիջումներ չը կարողացաւ անել տալ Թիւրքիային մակեդոնական հարցում:

ԻՍՏԱՆԼՈՒՐԵՐ

Կարնո, ինչպէս երևում է, իր ընտանիքին կառողութիւն չէ թողել: Այդպէս է ասում գոնէ հանգուցեայի եղբայրը, Ալոյֆ Կարնո, որը «Tempt» լրագրի թղթակից արած հարցին՝ պատասխանել է հետեւեալը. «Մեր ընտանիքում ոչ ոք իսկապէս հարուստ չէր: Ինչ վերաբերում է ուժեղին, որ իմ եղբայրը ստանում էր, որպէս հանրապետութեան նախագահ, դուք գիտե՞ք, թէ ինչ հաշիւացք ունէր նա այդ բանի մասին. «Ես չը պէտք է պահեմ,—ասում էր նա,—ոչ մի սանտիմ այն ուժեղից, որ տալիս է ինձ գանձարանը. բայց ես պէտք է իմ ուժիկը այնպէս գործադրեմ, որ շըրջապատէր պատուով, եթէ ոչ փայլով: Ֆրանսիայի ներկայացուցչութիւնը իմ եղբայրը ճշգրտեց անհետում էր այդ սկզբունքին, և ես կարծում եմ, որ նիւթական կողմից իմ հարսը և եղբորորդիս կը հեռանան Եւրոպայից ապաւիտ աղքատ, քան էին, այնտեղ մտնելու ժամանակ»:

«Wiener Tageblatt» լրագիրը կենսագրական տեղեկութիւններ է հաղորդում Կրակովում վախճանված կարդինալ Գունտակուս մասին, որից երևում է, որ լեհական եպիսկոպոսը ոչ միայն եկեղեցու նշանաւոր գործիչ էր, բայց և նշանաւոր մարդ: Վախճանված կարդինալ-եպիսկոպոսը համակրութեան արժանի է արդէն իր մասնակցութեանը օղբերգական մահաբաժանութիւններով: Երիտասարդ ժամանակ, համալսարանում իր ուսումնասիրութիւններից յետոյ, նա իրաւաբանական ասպարէզն ընտրեց իր համար: Բազմը ժողովում էր նրան. բացի նիւթական միջոցներից, նա պատրաստվում էր պատկել սիրած աղջկայ հետ, սակայն համարեա հարսանիքի նախընթաց օրը հարսնացուն մեռնում է: Գունտակուսի միակնարութիւն է որոնում հասարակական գործունէութեան մէջ, բայց որովհետեւ լեհական յարաբերութիւնները Աւստրիայի հետ այն ժամանակ ուրիշ էին, այդ պատճառով Գունտակուս իր գործունէութեան համար մի քանի տարի բանտարկութեան դատապարտուեց: Պատիժը կրելուց յետոյ նա կրկին հանդիպում է մի կնոջ, որը գրաւում է նրա սիրտը,—և կրկին նոյն օղբերգական վիճակը հարսնացուն մեռնում է հարսանիքից առաջ: Գունտակուս, որպէս կրօնական մարդ, պաշտպանութիւն է որոնում եկեղեցում: Նա 40 տարեկան էր, երբ սկսեց աստուածաբանութիւնը ուսումնասիրել սկզբում Կրակովում, ապա Զուսմում: Կաթոլիկ եկեղեցին շատ սակաւ է ունեցել այդպիսի անշահաւէր գործիչներ. նա յայտնի էր իր կրօնական ներողամտութեամբ, և սիրով էր վերաբերվում դէպի թոյլեր և կարօտանքները: Հասարակ ջանքային պաշտօնում անցկացրած տասն տարիները ստեղծեցին նրա համար ահագին ժողովրդականութիւն: 1879 թվ. պապը եպիսկոպոս ձեռնադրեց նրան, 1890 թվ. կարդինալ և որպէս Կրակովի եպիսկոպոս՝ նա վայելում էր ամբողջ ազգանակութեան անսահման սէրը և յարգանքը, որ երեսը նրա վրինա գնալու ժամանակ: Ուղղափառ քահանայներ, բողոքական պատուարներ, հրէայ բարբիներ զիմաւորում էին նրան ճանապարհին, կայարաններում՝ իրանց հաղորդաւոր հաւատակիցներով: Ամեն կողմից ժողովուրդը, առանց կրօնի խտրութեան, գալիս էր օղջանելու այն նշանաւոր ծերունուն, որը զանազանութիւն դնել չը գիտէր մարդկանց մէջ:

Երեք տարի առաջ Ջիզմունդ Բրոքի, ունդարական «Neues Pester Journal» լրագրի սեփականատէրը, մի գումար նուիրեց, որպէս զի երեք տարին մի անգամ 3000 Փլորին պրէմիա արվի այն անձին, որը նշանաւոր ծառայութիւններ մատուցած կը լինի իր հայրենիքին լրագրական ասպարիզում: Նորին ունդարական զիմաւորների ակադեմիան առաջին անգամ միաձայն տուեց այդ պրէմիան հրապարակախօս Ֆրանց Պուլսիկին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՑ ԳՈՐԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՉ, 1 յունիսի: Երկի Տուլոնում կայանաւորված են երեք մարդիկ, որոնք «Carnot» գրահակիր նաւը ջուրը իջնելու ժամանակ փորձում էին զինարանում նոր հրեճ գցել:

ՉԻԱՂՈ, 1 յունիսի: Գործադուլը իրապէս դադարեց:

ԼՕՆԴՈՆ, 1 յունիսի: Օտար պետութիւնների ներկայացուցիչների կոնֆերանսիայում, դաշնագրութեամբ յիշատակված կորեական նաւահանգիստները չէզոքացնելու առաջարկութեան վերաբերմամբ, եսպետական զեկույան յայտարարեց, որ առաջարկութիւնը ինքն սկզբունքով ընդունում է Չէմուլպոի վերաբերմամբ, սակայն ուրիշ նաւահանգիստների վերաբերմամբ պէտք է սպասել Տոկիոյ ստացվող հրահանգներին: Թագաւորը, զիջանքով Եսպետայի ճնշմանը, նշանակեց երեք կամիստ

ներ՝ երկրի ներքին վարչությունը կերպարանավորելու վերաբերյալ հարցը ուսումնասիրելու համար Չեռնովցի չեղարկված վերաբերյալ կատարելով հետազոտությունները նշանակությունը հանդիսանում է զուրա բերել իր դրեբերը և գործունեությունը ազատություն է վերադարձում իրան զինուորական կողմից: Լորդ Կիմբերլի առաջարկեց Մեծ-Բրիտանիայի անունից կատարելով Չեռնովցիի մեջ եղած վեճը կադրադրել միջնորդ դատարանով: Երկուսիս ընդունեց առաջարկությունը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 յուլիս: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքիցի տարածման ամենագլխավոր պատճառներից մեկն էլ տոն օրերի թե՛քը և խմիչքների չափազանց դրածությունն է, Պետերբուրգի քաղաքացիները հրամայեց՝ կիրակի և տոն օրերը փակել բոլոր գինեաները, այն արվարձանները, ուր հարեցնում են յաճախողներին, բոլորովին կը փակվեն: Չեռնովցիի միևնույնը երկկ վերադարձաւ գեղի Մուրման իր արած ճանապարհորդությունից:

ԼՕՆԴՈՆ, 3 յուլիս: Չինական կառավարությունը ընդունեց Անգլիայի միջնորդությունը՝ Կորեյի վերաբերյալ Չինաստանի և Եսպանիայի մեջ եղած վեճը կարգադրելու համար:

ՊԱՐԻՅ, 3 յուլիս: Աղգային տունը Պարիզում հանդիսանալու է: Բաղադրի տեսքը սովորական կիրակի օրվայ նմանություն ունի: Երբ Եղատ-Լատարիցեան ընկերությունները անցնում էին Ստարաբուրգի և Դաննա դ'Արկի արձանների առջև, կատարեալ հանդարտություն էր տիրում:

ՊԱՐԻՅ, 5 յուլիս: Բատարյում կայանատարված է Լիվորնոյց եկած մեկը՝ Օրեստ Լուկիերի անունով, որ կասկածվում է իտալական ժուրնալիստ Բանդիի սպանությունից մեջ:

ԼՕՆԴՈՆ, 4 յուլիս: Պամբի մասին Ռուսաստանի և Անգլիայի մեջ եղած բանակցությունները այնքան առաջ են գնացել, որ սահմանները չափերը համար յանձնագրովի նշանակելը, եթե այդ ցանկի կը լինի, հնարավոր է համարվում: Կրկին անկարգություններ սկսվեցին Կորեյի այն տեղում, ուր նրանք առաջ տեղի ունեին: Սպանված են մի քանի քրիստոնեաներ: Փրանսիական կաթոլիկ միսիոնարները վտանգի մեջ են գտնվում: Ազատամարտիկան տեղը անշարժ դրահաւոր նա է ուղարկվում՝ քրիստոնեաներին պաշտպանելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 1-ին		Յուլիսի 2-րդ	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե . . .	93 ր. 10 Կ.	—	—
Բեռլինի վրա 100 մարկ . . .	45 ր. 69	—	—
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	38 > 90	—	—
Ռուսի . . .	7 > 47	—	—
Մադրասի կուպոններ . . .	148 > 25	—	—
Արծաթ . . .	—	—	—
Քրոսային դիվիդենդ . . .	5 > 7	—	—
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	—	—	—
— 2-րդ . . .	—	—	—
— 3-րդ . . .	—	—	—
5% օսկեայ ընտա 1884 թ. . .	159 > 50	—	—
4 1/2 օսկեայ փոխառություն . . .	—	—	—
Անկեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	—	—	—
— 2-րդ . . .	—	—	—
— 3-րդ . . .	—	—	—
— 4-րդ . . .	—	—	—
Ներքին 5% առաջին փոխառութ. . .	242 > —	—	—
— Երկրորդ . . .	226 > —	—	—
Պետական երկաթուղային ընտա . . .	100 > 25	—	—
4 1/2 ընտա . . .	—	—	—
4% ներքին փոխառություն . . .	93 > —	—	—
5% գրաւ. թղթ. ազն. կապ. բանկի . . .	—	—	—
Ազն. կապ. Պետ. բանկի խաղաղութ. . .	—	—	—
Գրաւ. թղթ. . .	—	—	—
4 1/2% վիսյակ. գիւղ. հող. բանկի. . .	94 > 75	—	—
4 1/2% գրաւական թղթի կալուած . . .	—	—	—
Պետ. կրեդիտ. ընկեր. մեծաւ. . .	153 > —	—	—
— Թղթաւ. . .	—	—	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերության օրվարկայիններ. . .	101 > —	—	—
Մոսկվայի քաղաք. օրվարկայիններ. . .	101 > —	—	—
Օդեսայի . . .	102 > —	—	—
Թիֆլիսի . . .	99 > 50	—	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կապ. բանկի. . .	101 > —	—	—
— փոխառյալի . . .	100 1/8 > —	—	—

Ս. Պետերբուրգի բորսայի արամադրությունը իրադարձ է, առանց գործի:

Իմպերիալ ԱՆԻՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՆԵՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔԱՆԱՍԱՆՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ
ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուլիս, վարձույթի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՍՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժական և վնասվածքների (սիֆիլիս) հիւանդութիւններ:

Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և ներքաշին:

Դ. Դ. ԲՈՒԿԻՆՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց:

Ա. Գ. ԳՈՐԿԻՆ—1—1 1/2 ժ. ականջի, կոկորդի, և քթի:
Կին-բժիշկ ՏՈՒԲՈՎԻԿ—12 1/2—1 ժ. կանանց ց. Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երեխայից:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՐԿԻՆ—6—7 ժ. Սիֆիլիսի և մեղի ու սեռական օրգանների:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ.
Ի. Ե. ՖԱՆՏՈՒՆԻ—7—7 1/2 ժ. ականջի, կոկորդի և քթի ու ներքաշին: Երկուշորթի, չորեքշորթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՐԿԻՆ քիմիական և խաղաղարարական հետազոտություններ է անում մեղի, խիլ, առնան, կաթի և այլն:
Վճար 50 Կ: Համախորհրդի (կոնսիլիումի) դռնը բացվում է համար առանձին: Հիւանդանոցում ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ:
Հիւանդանոցի վերահսկող՝ ԲԵՐԿԱՅԵՄ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ (№ 72)

ԱՐԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ
ՌՈՒՍԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ
ԲԱՌԱՐԱՆ

Ա. Հատորի գինն է . . . 3 Բ.
Բ. Հատորներն . . . 4 Բ.
Վաճառվում է ինքնիշխան զրաւաճառանոցում, Գորովիսկի պրոսպեկտ:
Գրաւաճառներին 10% զիջումն:
(№ 58) 8—10

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Հնարոգներ
“ԳԼԻՑԵՐԻՆԱՅԻՆ ՓՈՇԻԻ”
չափազանց փափկացնում է և օգտակար է կաշուի համար:
Ձրուշնալ կեղծումներից:
(Ամբ. 1-ը) (№ 62) 2—10

Երևանում ծախվում է լաւ կազմակերպված

ԱՊՏԵԿԱՐՍԿԻ ՄԱԳԱՋԻՆ
Ցանկացողներին խնդրում են գիմել այս հասցեով. Դեղագործ Ա.ՐԶԱԿ ԹԱԿՈՎՐԵԱՆԵՐԻՆ, ԵՐԵՎԱՆԻՄ: (№ 79) 2—3

Մեծ Արժանաւորութեան

ՀԱՏԱԵՏ ԶՐԵՐ

“Պարսկական Եսասման”

Շաղկահատ Օ-դէ-Կօրս

“Պարսկական Եսասման”

Հոտաւէտ ջրեր “Պարսկական Եսասման”

Սապօն “Պարսկական Եսասման”

Պօմադա “Պարսկական Եսասման”

Ընկերութիւն

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Պրէյս-կուրանտը ձրի:

(ամ. 1) 2—12

Նիկողայոս Տէր-Վեդդեանցի հրատարակությունների պահպան յունիսի 10-ից մինչև առաջիկայ սեպտեմբերի 1-ը յանձնված է Կնիդրոնական գրաւաճառանոցին, ուր պէտք է գիմել այդ զրբերի պէտք ունեցողները: (№ 73) (Կ.) 3—10

Զգուշացե՛ք կեղծումներից:

Հիգիէնական

ԲՐՈՒՆՈ-ՏԻՄՈՒՆԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Ֆ. ԻԿԻԷՆՍ

պրովիդորի

Ոչնչացնում է երեսի դեղին բծեր, մաքրում է արեւից այլովածը, ոչնչացնում է սպուլներ և քրտիներ: Առաջարկվում է որպէս առաջին անուշաճոտ սապօն բարձր տեսակի Ռուկի մեղա՝ 1893 թ.

Գինը կտորի համար 50 Կօպ. 1/2 կտոր 30 Կ: Ծախվում է բոլոր դեղագործական մագաղաններում և դեղանոցներում:

Գլխաւոր պահեստ ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. ԻԿԻԷՆՍԻ մօտ ՍՍՍԱՎԱՅՈՒՐ: Դէպօ ԹԻՖԼԻՍԻՄ: Դեղագործ, ապր. կոլի. Ընկ. պահեստում, Մուրիմովի, Պոպովի և Ալմուրովի դեղանոցներում և Արխանգելսկի մօտ (Կ.) (№ 126) 8—12

ՀԱՄԱՌՈՒ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՄԱԿԱՆ ՄԻՊԱՍԵԱՆ զարդերի համար զիւղեւրում՝ հարկաւոր են Գ. դասակարգի ուսուցիչներ: Ռօժիկը՝ ըստ առաջին կողարի: Բացի դրանից արվում է նաև ճանապարհածախս, բնակարան, փայտ և ծառայ: Ցանկացողները թող դիմեն ինձ, Շամախի: Թեմական տեսուչ՝ Եղիշէ քահ. Կեղամեանց 2—3 (№ 74)

ԱՌԵՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆՁԱՆՑՀԱՄԱՐ

ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատան և:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տեսութիւն, 2) Առեւտրական Թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուարանութիւն համարիչի վրա, 5) Առեւտրական Թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղարկութիւն, վատ ձեռքի ուղղիլը:

Ուսումը սկսվում է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում: Սօցիալում Ալեքսանդր Բրիլոնովի տանը, № 9, Սերգիևիկայա և Նազարեայա փողոցների անկիւնում: Մրադիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Մովսիսեանցի բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэлянычу. № 62 10—32

ԱՏԱՄՆԱՐՈՅԻ

Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սօցիալական փողոց, սեփական տանը № 15—16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյան 4 ժամից մինչև 6 ժ. Կիրակի և տոն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ՝ կէսօրից լատու: (№ 145) 150—150

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԵԿԵԱՆԻ ՊԱՇՏՍ ԵՒ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ զեղերի, մորթի, զեղեցիկացող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և անտեսական զործիքների, բացված է Կուլիսայում, վարձուցով արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ: (№ 67) 84—100 (Կ. 2-)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

“ԲՐՈՍՄԻԱ”

ԲԱՐՁՐԱԳՈՐԾ ՀԱՍՏԱՎԱԾ 1881 թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԻ ՊԱՇՏՍԻ ԴԻՄԱՆԱԼՈՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒՐԻ
Ընկերութեան տոկոսարկը թղթերը պահվում են պետական բանկում:

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵՄԵՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

այսինքն գրամադրութեան և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինը աղջիկների համար, թողանքը տղաների համար և այլն, առանձին չանաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ ընկերութեան օգուտներին:

1894 թ. յունվարի 1-ին (Դոսիս) ընկերութեան մեջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 Րուբլի գրամադրութեամբ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԵՊԵՐԵՐԻՑ
Թէ առանձին անձնքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւնները գործարաններում ծառայողների և բանուորների, —պակասեցնելով ապահովագրական վրձարները՝ դիվիդենդի փոխաւէ:

ՀԻՐԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (չինութիւնների, մըքնաների, ապրանքների, կահկարասիքի և այլն):

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ անդիկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մեջ՝ ԹԻՖԼԻՍԻՄ, Սերգիևիկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական տոմսակներ ճանապարհորդներին ապահովագրելու համար զմբաղղ դէպքերից՝ երկաթուղիներով և չորեաներով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և չորեանային նաւահանգիստներում: (№ 42) 15—15